

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

Վառվառէ Իսահակեան, Յովհաննէս Գէորգեան Յովհաննիսեանները եւ Եգոր Յով-
հաննիսեան Փուղինեան՝ յաւօք սրտի յայտնում են ազգականներին եւ ծանօթներին՝
առաջինը հօր, երկրորդը աներոջ եւ երրորդը փեսայի կօշտակի սովորներով

ԻՍԱՀԱԿ ԴԱՎԼՈՎԻՉ ԴՊՊՈՎԻ

Մահը, որ տեղի ունեցաւ մարտի 10-ին՝ Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ
երեքշաբթի, մարտի 14-ին, առաւօտեան 10½ ժամին, Վելիամինովսկայա փողոց, №
24, իլինի տանից դէպի Մոզնու Ս. Գէորգ եկեղեցին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական գործունէութիւն.—ՆԵՐՔԻՆ ԵՆԵՐԻՆ ՍԵՆՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՒՔԻՆ ՍԵՆՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՊԵՐԵՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի հե-
տադատութեան առիթով.

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Մենք շատ անգամ գտնաւորուել ենք մեր
գիւղերի անշարժութեան վրա եւ ցան-
կութիւն ենք յայտնել, որ այնտեղ սկսվի
առաջադիմական եւ կուլտուրական շար-
ժում, բայց, պէտք է խոստովանել, որ ա-
ւելի խոշոր կենտրոններ, ինչպէս են մեր
գաւառական քաղաքները, շատ դժուար-
բար գիւղերից աւելի ստաճ չեն գնացել
եւ մինչեւ այժմ մնում են նահապետա-
կան վիճակի մէջ: Մինչդեռ գաւառական
քաղաքները մեծ դեր կարող էին խաղա-
լիս շրջապատող գիւղական ազգայնա-
կութեան համար, եթէ իրանք սկսէին
կանոնաւոր դարգացման շաւղի վրա դնել
իրանց հասարակական եւ անտեսական
գործերը:

Այդ կողմից շատ միտնարական են այն
մի բանի կուլտուրական փորձերը, որ
ձեռնարկել են մեր գաւառական քաղաք-
ները, եւ գիտողութիւնները ցոյց են տա-
լիս, որ գաւառական քաղաքի մէջ կատար-
ված բարեփոխութիւնները արդէն սկսել
են ազդել գիւղացիների բանիմաց մասի
վրա: Մեր քաղաքներն այժմ ստացան ինք-
նավարական կազմակերպութիւն եւ կարող-
ութիւն ունեն կանոնաւոր ժողովների եւ
խորհրդակցութիւնների միջոցով պարզել
իրանց անտեսական եւ հասարակական վի-

ճակը, իսկ իրանց եկամուտների աղբիւր-
ների բարեփոխութեան միջոցով բարձ-
րացնել քաղաքի ազգայնակութեան կեցու-
թեան աստիճանը:

Ապագայում գիւղական շրջանի համար
նոյն դերը պէտք է կատարէ զգնաւորն,
որ կը ժողովի ամբողջ գաւառի ներկայա-
ցուցիչներին կատարելու գաւառի վերա-
բերմամբ այն, ինչ որ քաղաքի վերաբերու-
թեամբ անում է քաղաքային խորհրդա-
րանը: Զգնաւորն օրակարգի հարցերից
մէկն է եւ կառավարութիւնը մտադիր է
մտնել նրան կայսրութեան բոլոր մասե-
րում եւ եթէ կան տեղեր, որտեղ չէ
մտցրված զգնաւոր, դրա պատճառն այն
է, որ տեղական զանազան առանձնայա-
կութիւնների պատճառով հարց է ծա-
ղում կազմակերպութեան նպատակաւոր-
մար բարեփոխութիւնների մասին, որոնց
մշակութիւնը սակայն յայտնի աշխատանք,
հմտութիւն եւ ժամանակ է պահանջում:

Նոյն ցաւալի կը լինի, եթէ մեր գա-
ւառական քաղաքների մէջ չեն գտնվի բա-
ւականաչափ եռանդուն եւ անձնուէր գոր-
ծողներ, որոնք կարողանային ապացույցա-
նել, որ ազգայնակութիւնը ընդունակ է
իր կարիքները ուսումնասիրելու եւ նրանց
կանոնաւոր դարման անելու: Թող գաւա-
ռական քաղաքների մէջ կատարվող հատ-
կաւ բարեփոխութիւնները խրախոյս դառ-
նան աւելի բաւարար եւ կատարեալ գոր-
ծունէութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՍԵՆՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Յանցանք գործելը այնքան վատ չէ, որքան
գործած յանցանքով պարծենալը: Եւ այս ա-

տարում մինչեւ Ալեքսանդրօպօլ—Կարսեան
երկաթուղին, որովհետեւ Ալեքսանդրօպօլի եւ
Երեւանի խնդրով տեղափոխվող ապրանքնե-
րից չըջակայ գիւղացիների գրպանն էր մտնում
1,200 հազար ռուբլի: Երբ չինվի եւ Երեւա-
նից—Ջուղա տանող գիծը, անկասկած այդ ե-
կամուտը խալած կը չորանայ գիւղացիների
համար:

Ի հարկէ, փոխարէնը երկաթուղու երակը
այդ կողմերի արդիւնաբերութեան նոր զարկ
կը տայ, բայց այդ նոր կեանքից մաս կը հաս-
նի եւ գիւղացիներին, երբ միայն նրանց աշ-
խատանքի ներկայ պայմանները աւելի ձեռն-
տու հանգամանքների մէջ կը դնեն: Իսկ այդ
հանգամանքների մէջ, բացի սակաւահողու-
թիւնը, ագիտութիւնը եւ ոռոգման պակա-
սութիւնը, քիչ տեղ չէ բռնում եւ հարկատ-
ւութեան ներկայ եղանակը, երբ, ըստ հետա-
զոտողի, ոչ միայն նոյն գիւղի բնակիչները,
այլ եւ զանազան գիւղեր, գաւառներ եւ նոյն
իսկ նահանգները կուրծն են հարկերի ծանրու-
թիւնը իրանց եկամուտներին եւ հողաբաժին-
ներին անհամար անարդարութիւններով:
Ով շատ ունի՝ նա քիչ է վճարում, եւ ընդհա-
կառաւոր Գիւղերը աւելի են վճարում, քան
քաղաքները: Այդպէս, օրինակ, Երեւանի նա-
հանգի ամեն մի գիւղական ծուխին ընկնում
էր 1886 թվին 12 ռ. 35 կ. հարկ, իսկ քաղա-
քի ծուխին՝ 4 ռ. 79 կ. (եր 332): Պէտք է չը
մոռանալ, որ գիւղացին բացի արքունական

մօթալի դրութեան մէջ ներկայումս մի որ եւ
է Զուլուրանդ չէ, մի որ եւ է ձեռնադրական
ազգ չէ, այլ վայրենութեան, յետամնացութեան
եւ բարբարոսութեան կատարեալ հակապա-
կեր ներկայացնող Անգլիան, աւելի ճիշդ ա-
սած—նոր Անգլիան: Մոայլ, յուսահատեցնող
տեսարաններ է պարզում աշխարհի առաջ այն
երկրը, որ այնքան զարգացրել է իր մէջ ա-
զատութիւնը, որ այնքան հանձարներ է հանել
համայն մարդկութիւնը երջանկացնելու համար:
20) հազարանոց մի բանակով յաղթութիւններ
տանել 40—50 հազար գիւղացիների դէմ եւ
այնքան արեւնալ այդ «հերոսութեամբ», որ
նոյն իսկ մոռանալ մարդկային ամենատարա-
կան պարտաւորութիւնները—ահա ինչ է տա-
լիս այժմ Զէմբլէյնների, բօսնայական արմե-
թիւների Անգլիան: Գաղափարականութեան հա-
մար ամենաառաջադէմ երկրի այս գրութիւնը
վերին աստիճանի ցաւալի երեւոյթ է: «Рече-
скія Вѣд.» լրագրի թղթակիցը փաստեր է
պատմում, որոնց մէջ նկարվում է Շէքսպիրի
եւ Դավիթին հայրենիքի բարոյական անկումը:
Նայելով տօնակատարութիւններին, հրապարա-
կական հրճուանքներին, թղթակիցը ասում է.

Դուրս է գալիս այնպէս, որպէս թէ Զօն
Բուլը, որ արդէն 200 հազար գինւոր է ու-
ղարկել եւ դեռ էլի նոր է նոր գնդեր է
ուղարկում, համարեա մի Դաւիթ է, որ
դուրս է եկել Փողկաթի դէմ, ունենալով
միայն մի պարս ու երեք քար: Լուծութեան
է տրվում մի չարաթ առաջ հաստատված
այն փաստը, որ տղայ երեխաների ու կա-
նանց թիւը աճում է սպանված բռնիների
չարքում...

Հրճվում են բօսնայական առիւծները, հըրճ-
վում են հասարակութեան այն դասակարգերը,
որոնք ընդունակ են միլիտարիզմի պաշտա-
մունքով արբենալ:

Մեզ, այժմ այստեղ ապրող օտարերկրա-
ցիներին համար, ծանր է տեսնել այս վայ-
րենի, չարահայտ հրճուանքը, որ պատճա-
ռում է մի բուռն գիւղացիների եւ հովիւ-
ների վրա տարած յաղթութիւնը, յաղթու-
թիւն այնպիսի զորաբաժինների վրա, որոնց
նշանաւոր մասը այժմ բաղկացած է երեւա-
նիցից (15—12 տարեկան տղաներ) եւ կա-
նանցից: Միլիտարիզմը եւ իմպերիալիզմը
բարձր դասակարգերը: Ականջ դնելով յաղ-
թութիւնը ունեցնողին, տեսնելով այն ամենը,
ինչ կատարվում է չորս կողմում, թուում է
թէ ներկայ եւ հարաւոր վայրենիների մի ա-
հագին ինձնջիւր,—վայրենիների, որոնք կա-
տաղաբար զոռարով, պահանջում են տանջել
կապած գերիներին:

Բայց դեռ կենդանի է «հին Անգլիան»,

հարկից պարտաւոր է պահպանել եւ հին խը-
ճուղիները ու բանել նորերի վրա, կոտորել
մորելի, ճանապարհ գցել պաշտօնեաներին, նա
պէտք է պետական լեզուն իմացող գրագիր
նոճիկ, տանուտէրի եւ պոլիցիական ծառայող-
ների վարձատրութեան մասին հողայի եւ այլն:
Այնպէս որ իր եկամուտի մօտ 10% նա պէտք
է վճարէ իրեն զանազան հարկեր եւ պարտա-
ւորութիւններ, թէեւ այն բոլոր քաղաքակր-
թական բարիքից, որոնց ստեղծելու համար
նա այնքան զոհաբերութիւններ է անում, նա
ինքը շատ քիչ է օգտվում: Եւ այն, օրինակի հա-
մար, ստենք, բժիշկներից, հիւանդանոցներից
եւ դպրոցներից: Անշուշտ տուրքերի այն մասը,
որ վերցնվում է իրեն «գեներալայական» եւ
գործադրվում պոլիցիայի ձեռքով, աւելի նպա-
տակաւորմար եւ խելացի գործադրութիւն է կը
ստանայ, երբ մեր երկրում եւս մտցնվի «գե-
ներալայական» զորանոցի չէ փոխվում այն ի-
րողութիւնը, որ հարկահանութեան ներկայ
կղանակի մէջ կան շատ պակասաւոր կող-
մեր, որոնց վերացնելու մասին արդէն կառա-
վարութիւնը արաւ առաջին փորձը—վերացնե-
լով գլխահարկը:

Հարկատուութեան վերանորոգութեան մասին
խօսելիս չէ կարելի ցանկութիւն չը յայտնել,
որ վերջապէս վերացնվի եւ այն կախումը, որ
ունեն այժմ «միւլեքադարական» գիւղացիները
իրանց ազնուական հողատէրերից: Մեր կանե-
րի, բէկերի եւ թռչնապարակ այսպէս կոչված

այսինքն այն Անգլիան, որ կուլտուրական աշ-
խարհի հրաշմուռնն ու նախանձն է գրգռում
Ահա այդ ներք վայրենութեան հասած այս
ընդհանուր հրճուանքների մէջ քաջութիւն են
ունենում ձայն բարձրացնել մարդասիրութեան,
ազատութեան անունից, բողոքել խայտառակ
պատերազմի դէմ եւ ինչ: Անգլիայում, այն-
տեղ, ուր կարծիքների, խօսքի ազատութիւնը
եղել է կեանքի ամենամեծ հիմքերից մէկը,
այդ հերոսները ենթարկվում են ամենազոռելի
բռնութիւնների եւ, որ ամենից շատ ցաւալին
է, այդ խայտառակ գործերի ներշնչող ու քա-
ջաբերող մամուլն է, անգլիական մամուլը...
Միտնողներ են կազմվում պօգալի արիւնա-
հեղութիւնը դատապարտելու համար. բայց
մամուլը, վարչապետ ամենամեծ բողոքների այդ
ժողովների մասին, աղմուկ է հանում, հաս-
ցէներ է հաղորդում—եւ ահա շինգօները
թափվում են ժողովարանից, կոխ ու ջարդ
են սկսում: Թղթակիցը բերում է մի շարք
փաստեր. նա յիշատակում է յականէ յա-
նուանէ, թէ որտեղ եւ ինչ բռնաբաններ
մահամերձ ծեծ են կրել Զէմբլէյնական հա-
զով վարակված հայրենասէրներից: Կայ ա-
ւելի եւս խայտառակ հանգամանք: Ծեծողնե-
րից մէկը մի լրագրում պարծենում է նրանով,
որ մի միտնողի ժամանակ ինքը եղել է այն
խմբի հետ, որ այսպէս ու այնպէս ծեծեց, քարշ
տուեց այս ինչ բռնաբաններն եւ վայրենիներ
կար ու բարակ չորհակալութիւններ է յայտ-
նում լրագրին, որի չորհիւ է իմացվել մի-
տնողի տեղը, ժամը: Նոյն իսկ հոլանդա-
«Times»-ը այդ տեսակ բռնութիւնների վերա-
բերմամբ գործ է ածում այսպիսի լեզու. «Դա-
ւաւաճառութիւն սերմանողները այժմ կրմանան
թէ ինչ բան է հայրենասէրների վրդովմունքը»:
Այս գրութեան մէջ ընկնողը, ընթերցողը, անդ-
լիական մամուլն է. միթէ իրաւունք չունենք
ասելու որ բռնիները, եթէ յաղթվին էլ, մի
սոսկալի վրէժ են հանել Անգլիայից, հասցնե-
լով նրան այս գրութեան: Մամուլի հետ ձեռք
ձեռքի տուած գնում է եւ եկեղեցին: Քահա-
նաները իրանց քարոզների մէջ անուանում են
բռնիներին չներ, հայնյում են կրիւզերին եւ
Շաէյնին եւ փառաբանում են անգլիական դա-
մատէրերի աւաղակային կողոպուտը: Մենք
մեծամեծ յոյսեր ենք դնում XX դարի վրա,
կարծում ենք թէ հետո չէ այն ժամանակը,
երբ մարդկայնութիւնը, ազատութիւնը կը լի-
նեն աշխարհի կուռքերը: Բայց տեսէք թէ որ-
քան սոսկալի փաստերով է ջարդում աշխարհի
լաւագոյն մասի երազները այն պետութիւնը,

«ազնուականների» հողերի վրա ապրող «ժա-
մանակաւոր—պարտաւորեալ» գիւղացիները, բա-
ցի արքունական հարկից, պէտք է վերոյիշեալ
պարսներին վճարեն իրանց արիւն-քորոնքով
վաստակած հողային բերքերից 4/30 մասը,
որ անում է աւելի քան 12%: Այդպէս էր եւ
գիւղացիների դրութիւնը Ռուսաստանում մին-
չեւ 16 փետրվարի 1864 թուի: Անշուշտ ժա-
մանակ է, որ եւ մեր երկրում վերջ դնվի
պարսկական բեժիմի այդ ոչ գեղեցիկ «ժամա-
նակաւոր» մնացորդին...

Մեր վրեժը բոլոր միջոցների գործադրու-
թեամբ, ի հարկէ, շատ կը բարեօքի գիւղա-
ցու անտեսական դրութիւնը, բայց կարիքը,
անբերրութիւնը դարձեալ, թէեւ ոչ այն չա-
փերով, իրականութեան մէջ գոյութիւն կու-
նենայ: Աղէտները շատ անգամ անսպասե-
լի կերպով են մարդկանց գլխին թափ-
վում: Ուրեմն միշտ պէտք է պատրաստ
լինել վտանգի ժամանակ շուտափոյթ օգնու-
թիւն հասցնելու: Այդ պատճառով պահանջում
պաշարի կամ պահանջում դուրս գալու հար-
ցը մեծ նշանակութիւն ունի ժողովրդի ապա-
հովութեան տեսակէտից: Այդ պահանջը ի նը-
կատի ունենալով 1880 թվին Երեւանի նահան-
գում հրամայված էր ամեն տեղ բանալ հայա-
հատիկների շտեմարարաններ: Սակայն
1886 թվին երեւաց, որ այդ կարգադրութիւնը
համարեա չը գործադրված է մնացել եւ շու-
մարանները դատարկ են: Այն ժամանակ աւելի

1) Տեւ Վճար թ. 39:

U o n l y i m.

պէլ է 40 անառակ կանանց: Այդ չարիքները պատճառը Զօլայի, Զուգերմանի, Մօպսամանի գրողաճըներն են, որոնք հրապարակ են հանված հասարակական կենքի ապականված կողմերը եւ որոնք, ըստ տարաբնակական ճաշակի, վերաբերում են ժողովրդի ամօթի զգացումները:

Երկրորդ ընթերցման ժամանակ, պատգամաւորների մէջ տեղի ունեցած կոպտութիւններից յետոյ, առաջարկ դնողները պնդում են, որ իրանք չեն խօսի գեղարուեստի ճշման, այլ միայն անբարոյականացուցիչ եւ քրիստոնէական գրաւորները վերաբերող գործերի մասին: Իսկ ինչպէս են հասկանում Շառքերը եւ ընդհանրապէս իրենց գրողները:

Այս մարդիկ, որոնց մասին, նոյն իսկ ամենաթանկ քննադատներն էլ մէկը, ըստիւստադի պատգամաւոր հակաանմամբ Բիւրեղավաղ ասում է, թէ նրանք նոյնքան հասկացողութիւն ունենան գեղարուեստի մասին, որքան կոյրերը գոյնիւր մասին: Գեղարուեստ հասկացողութիւն չունենալու է ըմբռնում մի նկար, քան թէ օրինակ, մի ուստիան: Այս մի քանի օրինակներ, որ բերում են պատգամաւոր Ֆօլմար եւ Միւլեր, օրինակներ, որոնք վերջրված են ուստիական անցնալից, ուրեմն դեռ այս օրէնքի լիազորութիւնն ստանալուց շատ առաջ:

Նշանաւոր նկարիչ Բուրքհարտ, Կանօլմա Գրաքցի պատկերները անբարոյականացուցիչ են համարվել. նոյն իսկ Գարբիէլ Մաքսի Բիւթա կոչված եկեղեցական նկարը անբարոյականացուցիչ է համարվել: Զուգերմանի «Սօզօմի վերջը» արգելիվ է ներկայացուցու, առարկելով թէ «արժանաւոր ամբողջ ուղղութիւնը մեզ չէ ստացում»: Նոյն հեղինակի միւս գրուածքը՝ «Յովհաննէս», որը բարձրացնում է քրիստոնէական սիրոյ արժանիքը, մի քանի անգամ արգելվել է:

Այս փաստերից յետոյ պատգամաւոր Միւլերը վերջացնում է իր ճառը հետեւեալ խօսքերով. «Ազատ գրականութիւնը եւ գեղարուեստը յետադիմութեան աչքի փութն են եղել: Ընդունեցէք նոր օրէնքը, այն ժամանակ ձեր աշունքը կը գրուի: Գեղարուեստական գեղարուեստի եւ գրական պատմութեան մէջ, բայց ոչ թէ ոսկեայ, այլ սեւ գլխատառերով»:

Երկէ հասարակաց կարծիքի պաշտպան պատգամաւորների փոքրամասնութեան հակառակ ընդունվեց Lex Heinze: Այդ առիթով, գեղարուեստագէտներից ընտրված մի կոմիտէ, Հերման Զուգերմանի նախագահութեամբ, տարածել է մի շրջաբերական, որով յայտնվում է, թէ նա պէտք է ծրագրված սահմանափակումների դէմ: Բնական վերջը կուրի ի միջի այլոց յայտնվում է եւ այն, որ նոր օրէնքը, ճշմարիտ է, մի քիչ աւելի բարեկիրթված է, այնու ամենայնիւ շատ խառնաշփոթութիւններ պէտք է առաջ բերի: Գեղարուեստին վերաբերված յօդուածները, իբր մի ծանր հարուած գեղարուեստի զարգացման դէմ, պէտք է խիստ զիւստգրութեան ենթարկվին: Կոմիտէն յոյս է յայտնում, որ իրան կաշակցեն այդ գործով հետաքրքրվող միւս ընկերութիւնները:

Յ. Յովհաննէսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Franc. Zeitung» լրագրի Լօնդոնի թղթակիցը հաղորդում է, թէ Վիկտորիա թագուհին անպակաս սաստիկ վերաբերված է Փրանսիական ծարրածու թերթերի նկարներով, որ շատ քիչ է խօսում Փրանսիայի եւ Փրանսիացիների մասին եւ թղթ չէ տալիս իր ներկայութեամբ յիշել Պարիզի ցուցահանդէսի անունը: Ոչ մի քան, որ պատկանում է թագուհուն, չէ ուղարկվի ցուցահանդէս, արգելված է նոյնպէս արքայական կալուածներից որ եւ է մէկի պատկեր կամ մօզերը պատկերել ցուցահանդէսի համար: Թագուհին թողնում չէ տեսնել եւ այն առեւտրական տներին, որոնք իրանց արտադրութիւնները պիտի ուղարկեն ցուցահանդէս, մասնաւորապէս անկ, թէ որոնք նորին մեծութեան մատակարարներն են:

ՄՇԱԿԻ «ՀԵՌԱԳԻՐՆԵՐ»

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 մարտի

ՊԵՏԵՐԲԱՐԴԳ: Մարտի 10-ին Նոյա Կայսերական Մեծութիւնները այցելեցին Կայսերական իրաւագիտական դպրոցը: Մարտի 10-ին Թագուհի-Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնա եւ Մեծ-Իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնա այցելեցին Վիլիէի հիւանդանոցում Ֆելիքսի եղանակով կազմակերպած լուսարուծարանը:

ԼՈՆԴՈՆ: «Times»-ին հեղադրում են, թէ Մէֆֆլինը աղատելու համար նշանակված գործը ճանապարհ ընկնելու օրը դեռ եւս անորոշ է:

«Times»-ին հաղորդում են Սինգապուրից, թէ յիսական վերանորոգիչ Կանգ-Լու-Վէյ, որը, իբր թէ, մի ամիս առաջ գնացել էր Լօնդոն, վերադարձաւ Սինգապուր եւ այժմ ուստիականութեան հակողութեան տակ ապրում է մի ամբարնոցում: Այս լուրը սաստիկ յուզումն առաջացրեց Սինգապուրում ապրող չինացիների շրջանում:

ԿԻՄԲԵՐԼԷՅ: Մի բառարէյա հեծեալների պաշտպանութեամբ, երէկ հետախուզութիւն կատարելիս հանդիպեց թշնամուն Վարրենտոնի մօտ. երկուստեք սկսվեց բաւականին զօրեղ թնդանօթածուլութիւն: Բռնարկի չորս թնդանօթները ոչ մի վնաս չը պատճառեցին եւ վերջ ի վերջոյ ստիպված եղան լռել: Անգլիացիներին վերաւորվեց մի զինուոր: Այսօր թնդանօթային կուրը նորից սկսվեց ու թէեւ նա սկզբում զօրեղ էր, բայց յետոյ փոքր առ փոքր թուլացաւ:

ԲԼՈՒՄՖՈՆՏԷՆ: Ֆրէնչ հեծեալագործի մի բրիգադայով եւ հեծեալ հետեւակներով, գնաց Տաբանչու, որ գտնվում է Բլումֆօնտէնի եւ Լէդի-Բրանդի մէջտեղում: Այնտեղ նա հեղեղափական հաղորդակցութիւն սկսեց Մասսարուի հետ:

ՎԱՐՐԵՆՏՈՆ: Բռնարկը հեռացան Կլինդանից եւ վեղգործոնից եւ հեռանալիս՝ ջրասող արին Բիվերտոնի եւ Վինգորտոնի մօտ գտնվող շարժական կամուրջը: Այժմ Վալ գետի մի ափից դէպի միւսը կարելի է անցնել միայն լողալով:

ՊԱՐԻՉ: «Figaro» հաղորդում է, թէ Լուրէն ներումն չտրեց Կրիստիանիին եւ նրա հետ միասին ուրիշ 50 դատաւարութեաների: Ներման թուղթը կը ստորագրվի երեքշաբթի օրը:

Կ. ՊՕԼԻՍ: Հայոց պատրիարք Օրմանեանը հրաժարական խնդրի ներկայացրեց Բ. Դոանը: Նրա համար, որ Սօի կաթողիկոսական ընտրութեան դէմ նրա տուած բողոքը մնացել է անհետանք:

ԲԵՐԼԻՆ: Ապստամբների դէնք յանձնելը զանազ է առաջ գնում. ենթադրում են, թէ նրանք թագնում են գէնքերը: Նախկին լանդրօստը եւ ուրիշ պաշտօնատար անձինք զինուորների հակողութեամբ ուղարկված են Կապալատու:

ՄԱՍՍԵՐՈՒ: Վերջին օրերում բռնարկը բազմաթիւ սպիւրով Սմիթֆիլդից եւ Մէյսիլից ուղեւորվեցին դէպի Լէդի-Բրանչ, Դրանք, երեւի, այն գործերն են, որոնք Նօրվալպօմարից նահանջում էին դէպի Բետուլիա: Այժմ նրանք հիւսիս են գնում:

11 մարտի

ԼՈՆԴՈՆ: Համայնքների ժողով: Զինուորական միջնադրի օգնական Ուիլյամսէյ յայտնում է, թէ Հարաւային Աֆրիկայում գործերի դործածական գնդակները «2» նշան են կրում եւ միաձոյլ կազմ ունին, իսկ «5» նշանով գնդակները յետ են առնված եւ երբէք չեն գործածվել պատերազմում: Նոյնպէս քիչ են գործածված «գում-դում» գնդակները: Դիլլօնի հարցին, թէ ճշմարիտ է արդեօք, որ Հարաւային Աֆրիկա են ուղարկված «4» նշանը կրող գնդակները, այսինքն դատարկ ծայր ունեցող պայթուցիկ գնդակներ, Ուիլյամսէյ պատասխանեց, թէ այդպէս չէր կարող լինել: «4» նշանը կրող գնդակը պաշտօնական գնդակ է. նա սկզբում բաժանվեց Կապի գործերին, բայց յետոյ յետ առնվեց եւ պատերազմի մէջ գործ չը դրվեց: Դիլլօնի հարցին, թէ ուղղի է արդեօք, որ այժմ գործերի ձեռքին կան «4» նշանը կրող գնդակներ, Ուիլյամսէյ ասում է, թէ նրանք յետ են առնված: Դիլլօնի հետեւեալ հարցին, թէ յետ բերված են արդեօք այդ գնդակներն Անգլիա՝ Ուիլյամսէյ պատասխանում է. «չը գիտեմ»:

Պաշտօնական լրագրում հաղորդված է, թէ այն չաբաթվայ ընթացքում, որ վերջացաւ մարտի 3-ին, 30 վիրաւորված օֆիցէրներ Լէդի-Սմիթում պաշարվածներից, նորից մտան գործող գործերի շարքը: Նոյն չաբաթվայ ընթացքում զանազան հիւանդութիւններից մահացան Կիմբերլէյում—18 հոգի, Լէդի-Սմիթում—15 հոգի եւ Կապի գաղթականութեան այս եւ այն մասում—22 հոգի: Մարտի 4-ին, Վարրենտոնի մօտ, վերաւորված են 4 հոգի:

Երեկոյան լրագրներում հրատարակված է մի հեռագիր Կապալատուից, որով հաղորդվում է այնտեղ ստացված տեղեկութիւնը, թէ Ֆրէնչ կուրէն է բռնարկի հետ Բլումֆօնտէնի արե-

ւելեան կողմում: «Բէյտէրի գործակալութիւնը» նկատում է, թէ ակնհեւ է, որ խօսքը բռնարկի եւ Ֆրէնչի հեծեալների մէջ տեղի ունեցած կուր մասին է, որոնց Տաբանչու գալը հաղորդել էր գործակալութիւնը: Բռնարկը Օրմանեան գետից նահանջում են դէպի հիւսիս: Բազուղօւնդի բլուրներից երեւում էր, որ նրանք բազմաթիւ են:

ԿՐՕՆՇՏՆԻ: Օրմանեան բռնարկը վերադառնում են մեծ խմբերով: Կառավարութիւնը որոշել է վճական գնալորութիւն չդրել տալ թշնամուն: Կազմակերպվում են բազմաթիւ զորաբաժիններ: Բուրգէնները գործում են այժմ աւելի վճռողաբար քան երբ եւ իցէ: Հրատարակված է մի պրօկլամացիա, որով Շտէյն խորհուրդ է տալիս բուրգերներին հետեւել զինուորական ծառայութեան մէջ մտնելու: Կրաւէրին եւ ամենեւին չօգնել անգլիացիներին ու դէնքեր չը յանձնել, եթէ նրանց չի ստիպի անհրաժեշտ հարկը: Իւրաքանչիւր ոք, որ չի հնազանդվի այս պատուէրներին, կը մեղադրվի որպէս պետական դաւաճան եւ կենթարկվի ամենախիստ պատժի զինուորական օրէնքով:

ԼՈՆԴՈՆ: Մարտի 3-ին Բուլուվայօրից հաղորդում են «Times»-ին, թէ ռուստիկ թնդանօթային կուրից յետոյ, գնդապետ Պլումբը, գիւլիկայ վրա հանեցին պէս, յետ քաշվեց Լօբաւորից դէպի հիւսիս: Այժմ նա գտնվում է Կրօօդիկայուրի մօտ:

Times-ին գրում են Սպրինգֆօնտէնից, թէ օրմանեան բռնարկի այժմեան հաղանդութեան յայտարարութիւններին պէտք է դրոյ: Վերաբերվել, որովհետեւ կան ապացոյցներ, որ նրանք վարվում են ոչ բուրոյովին անկողի եւ նրանց յանձնած դէնքերի նշանաւոր մասը բաւական վատ դուրս եկան:

ԼՈՆԴՈՆ: Լօրէնցօ-Մարկեզէից հաղորդում են, մարտի 6-ին, թէ պօրտուգալական գործերի յանկարծական ուղարկումը դէպի Տրանսալպալի սահմանը կիսապաշտօնապէս բացատրում են նրանով, որ Գոասանդում անկարգութիւններ են ծագել: Ասում են, թէ տեղացիների մի զորաբաժին Տրանսալպալից խուժել է Գոասանդ եւ այնտեղ կուր է սկսել տեղական մի ցեղի հետ: Նահանգապետը անկարող է ճշնել ապստամբութիւնը եւ հարկադրաբար օգնութիւն է խնդրում Այնտեղ ուղարկված է հետեւակների եւ հեծեալների մի զորաբաժին երկու թնդանօթով, մասամբ ջրային ճանապարհով, մասամբ երկաթուղով:

ԿՐՕՆՇՏՆԻ: Ունեղտօնից եկած փախստականները հաղորդում են, թէ ապստամբները ամբարցել են Կենդուրտի եւ Վանիլիֆէի մէջ տեղում՝ բրիտանական զօրքերին ընդդիմութիւն զոյց տալու համար:

ՍՊՐԻՆՏՖՈՆՏԷՆ: Ստացած տեղեկութիւնների համաձայն՝ 500 բռնարկից բաղկացած մի զորաբաժին, որ գտնվում է Վանդերգորտի հրամանատարութեամբ, Ֆօրմիտի մօտ, վրձնել է կուր: Բնական վերջին ծայրահեղութիւն: Օլիվիէն յետ է մղված Բրաբանտից մինչեւ Ալիվալօրտ 300 մարդից բաղկացած զօրաբաժնով եւ 70 սպիւրով: Նրա զօրքի մեծ մասը գործնից առաջ արդէն հեռացել էր նրանից:

ՄԱՍՍԵՐՈՒ: Վերջին 48 ժամվայ ընթացքում կառավարական աստիճանաւորները եւ բրիտանական զօրքերը, որոնք այնտեղից 50 մղոն հեռու են գտնվում, հեղեղափոխի միջոցով շարունակ տեղեկութիւններ էին ստանում բռնարկների զօրաբաժինների շարժումների մասին, որոնք տեղի են ունենում տասը մղոն հեռաւորութեան վրա, Բազուղօւնդի սահմանի երկարութեամբ: Իւրաքանչիւր րօպ պապում են բռնարկներ եւ անգլիացիների ընդհարմանը: Օրմանեան բռնարկից մօտաւորապէս 100 հոգի անձնատուր եղան Բազուղօւնդի իշխանութիւններին:

ՍՕՖԻԱ: Մարտի 7-ին Վարնայում տեղի ունեցած անցքերի մասին, որոնք առաջ եկան տասնամորթի նոր հարկի դէմ բողոք յայտնելու պատճառով, հաղորդում են, թէ ժողովը բաղկացած էր 500 գիւղացիներից, որոնք յետոյ փախելով եւ քարերով յարձակվեցին ժանդարմների եւ զինուորների վրա: Զինուորիկները հրացան արձակեցին եւ սպանեցին 9 ու վիրաւորեցին 11 մարդ:

Կ. ՊՕԼԻՍ: Բ. Դոան պատասխանում դեռ պահների միայնեալ յայտարարին, որով բողոք էր յայտնված մաքսային տուրքը աւելացնելու դէմ, ասված է, թէ Բ. Դոան, ի նիստի առնեալով տեւտարական դաշնակցների բացակայութիւնը մի կողմից եւ միւս կողմից երկրի ֆինանսական նեղ գրութիւնը, որոշել է 1901 թվի մարտի 11-ից առնել մաքսային պայմա-

նադրական վճար, իսկ ներկայ տարվայ մայիսի 1-ից աւելացնել մաքսը 30%-ով:

ՊԱՐԻՉ: Դոկտօր Լէյրս այնտեղ կը գալ մարտի 18-ին ներկայ լինելու համար այն բանկէտին, որ Դէկլանտ տալու է գեղադաններին:

ՍՕՖԻԱ: Գաղտնի խորհրդական Կօրէկօին յանձնարարութեամբ այստեղ ուղարկելու մասին «Народныя Права»-ն գրում է. «Բօլշաւիստ երկմանի է, որ մեծահոգի ազատարար Ռուսաստանը այս անգամ եւս համալրարար վերաբերվեց նրան: Նեղութիւն յանձն առնելով ծանօթանալու նրա ֆինանսական գրութեան հետ»: Լրագիրը չորհաւորում է կառավարութեան, որ նա հասել է այսպիսի բաւարար հետեւանքների՝ Ռուսաստանի հետ ունեցած իր յարաբերութիւնների մէջ:

ԲԵՐԼԻՆ: Երէկ Պելզէից Տրիէստ են ուղարկված 45 թնդանօթներ, որտեղից նրանք ճանապարհ կը դնեն դէպի Հարաւային Աֆրիկա՝ անգլիական զօրքին հասցնելու համար:

ԲԵՐԼԻՆ: Ժիլք տեղեկութիւններ ունեցող շրջաններում անհիմն եւ տեղեկացիօք առատակ են համարում լրագրիները հաղորդած այն տեղեկութիւնը, թէ ռուսական լրագոր Մանսուրովին հրամայված է ընդհատել ամեն մի յարաբերութիւն սերբիական կառավարութեան հետ: Մանսուրով երէկ սովորական այցելութեան գնաց միջնադր-նախագահի մօտ, նրա ընդունելութեան օրվայ առիթով:

ՊԵՏԵՐԲԱՐԴԳ: Մարտի 11-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնա Վարչապետ երկաթուղով ճանապարհ ընկաւ դէպի Դանիլա: ՎԱՐՐԵՆՏՈՆ: Երէկ թշնամին կամուրջի պահպան-զօրքի դէմ սաստիկ հրացանածուլութիւն սկսեց, որին անգլիացիները պատասխանում էին ընդհատումներով: Թնդանօթները գործի մէջ չը խառնվեցին: Ակնհեւ է, որ դեռ անցնելիս անգլիական զօրքը խիստ ընդդիմութեան կը հանդիպի:

Տեղեկութիւններ են ստացված, թէ ազատականները Օրմանեան հանրապետութեան հիւսիս արեւմտեան սահմանից յետ են կանչված եւ հրաման են ստացել անցնել դեռ եւ գնալ Տրանսալպալ:

12 մարտի

ԺԼՆԵՎ: Կարա-Թէօօրի փաշան այսօր երկար խօսակցութիւն ունեցաւ սուլթանի փեսայ Մահմուդ փաշայի հետ: Մահմուդին չրջապատողները հաւատացնում են, թէ Կարա-Թէօօրին եկել է այստեղ Մահմուդից առաջ եւ կարողացել է համոզել երկու ազդեցիկ երիտասարդ-թիւրքերի, որ նրանք իրանց կամքով հեռանան այստեղից՝ խոտախալով նրանց պետական փառաւոր պաշտօններ Թիւրքիայում:

ՎԻԵՆԱ. «Pol. Cor.» հաղորդում է աւստրո-ունգարական կառավարութեան պատասխանը Հարաւ-Աֆրիկական հանրապետութեան ներքին խնդրին: Պատասխանը տեղեկանք էր հետին պայտէս են կազմված: Աւստրո-ունգարական ջերմապէս ցանկանում է, որ արիւնհեղութիւնը գաղաքի Հարաւային Աֆրիկայում եւ խաղաղութիւնը վերականգնվի: Նա հաճութեամբ կաշակեց այդ նպատակին հասնելու, բայց միայն այն ժամանակ, երբ միջնորդութիւնը հարաւոր լինի, այսինքն երբ երկու պատերազմող կողմերն եւս միջնորդութիւնը ընդունելի համարեն: Եւ որովհետեւ այժմ այդ պայմանը չը կա՝ ուստի աւստրո-ունգարական կառավարութիւնը հնարաւորութիւն չունի կատարելու հարաւ-Աֆրիկական հանրապետութեան ներքին խնդիրը:

ՊԱՐԻՉ: Հրամանը Կրիստիանիին աղատելու վերաբերմամբ ստորագրված է արդէն եւ նա երեկոյան կարճակով բանտից:

ՀՌՕՄ: Պատգամաւորների ժողով: Պայիսի հարցին, թէ այժմ, երբ Անգլիան կարող էր վերջնականապէս վերականգնել իր զինուորական վարկը Հարաւային-Աֆրիկայում, արդեօք Վիկտոր-Վենեստան չէ համարում, թէ Իտալիան կարող էր իր միջնորդութեան առաջարկել երկու պատերազմող կողմերին: Վիկտոր-Վենեստա պատասխանեց, թէ կարող է միայն կրկնել այն, ինչ որ քիչ ժամանակ առաջ յայտնել է պատգամաւորների ժողովին: Նրանից յետոյ, երբ անգլիական կառավարութիւնը յայտարարեց, թէ չէ ընդունում միջնորդութիւն, նորից պարզվեց, որ զիջումատիական քաղաքն այդ ուղղութեամբ ոչ մի գործնական հետեւանք չեն կարող ունենալ:

ՍՕՖԻԱ: Ռուսաց ֆինանսների միջնադրի խորհրդի անգամ Կօրէկօ հասաւ Սօֆիա: Լուրերն այցելով նրա այցելութիւնը բոլորապէս ֆինանսները հետազօտելու համար է:

